

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

Ընկերության հեղափոխական գարգացման խնդիրները և նպատակները

Հաջորդ հաշվետյու ժամանակաշրջանի համար Ընկերության հեղափոխական գարգացման խնդիրները և նպատակները հետևյալն է

- Ընկերությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:
- Ըստ կանխատեսումների, Ընկերության կողմից իր գործընկերներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2012թ.-ին կաճի մոտ 50%-ով՝ կազմելով մոտ 19 մլրդ ՀՀ դրամ:
- Այդ ժամանակահատվածում Ընկերությունը նախատեսում է վերաֆինանսավորել բնակչությանը ինչպես Երևանում, այնպես և մարզերում տրամադրված մոտ երկու հազար հիփոթեքային վարկ:
- Որպես վերաֆինանսավորման ներկայիս կիրառվող սխեմայի այլընտրանք, Ընկերությունը նախատեսում է աշխատանքներ իրականացնել հիփոթեքային վարկերի ձեռք բերման հնարավորության ուսումնասիրության ուղղությամբ՝ հետագայում կիրառելու նպատակով:
- Իր գործունեության ծավալները մեծացնելու և հիփոթեքային վարկավորումը աշխուժացնելու նպատակով Ընկերությունը միջոցներ կձեռնարկի ընդլայնելու իր գործընկերների ցանկը, ինչպես նաև կիրականացնի բնակչության իրազեկման միջոցառումներ՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:
- Իր գործունեությունը ֆինանսավորելու նպատակով Ընկերությունը կօգտագործի ինչպես ներկայում իրեն հասանելի միջոցները (սեփական միջոցներ, ՀՀ կառավարությունից ներգրավված վարկ, գերմանական KfW բանկի վարկային գիծ), այնպես և պարտատոմսերի թողարկումից և տեղաբաշխումից ստացված միջոցները:

Մասնավորապես, մինչև 2012 թվականի վերջ Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխել մոտ 2.5 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր: Հաշվի առնելով տնտեսությունում տիրող իրավիճակը (մասնավորապես տոկոսադրույքների բարձր մակարդակը) և հնարավոր ներդրողների կողմից ներկայացվող պահանջարկը՝ կանխատեսվող ժամանակաշրջանում Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը կլինեն մինչև մեկ տարի մարման ժամկետով:

- Ինչպես և հիմնադրման օրվանից, Ընկերության ռազմավարությունը ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը:

